ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն արձակագիր Զորայր Խալափյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Շարուրի փողոց h.20 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ անվանի գրող, արձակագիր Զորայր Խալափյանը ծնվել է 1933 թվականի օգոստոսի 1-ին, ԼՂՀ Թալիշ գյուղում:

1956 թվականին ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1956-1967թթ. աշխատել է Երևանի մի շարք գիտահետազոտական ինստիտուտներում՝ որպես ինժեներ:

1994-1996թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարը:

Զ. Խալափյանի առաջին ստեղծագործությունն է եղել «Հեղեղ» վիպակը», որը լույս է տեսել 1962 թվականին, ինչպես նաև նրան մեծ ճանաչում է բերել «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» (1966թ.) վեպը, որի հիման վրա նկարահանվել է համանուն կինոնկարը:

Հայ անվանի գրող, արձակագիր Զորայր Խալափյանը գրել է մի շարք պիեսներ և պատմվածքներ, մասնավորապես՝

1. «Ասպետն ու զինակիրը»
2. «Արա Գեղեցիկ և Շամիրամ»
3. «Միջնաշեն»
4. «Որտե՞ղ էիր, մարդ աստծո»
5. «Թթենի»
6. «Ջերմանց մխիթարություն»

Զ. Խալափյանն արժանացել է Հայաստանի Գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան, ինչպես նաև ՀՀ Կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաթևոսյան» և «Ոսկե եղեգն» նախագահական մրցանակների:

Զորայր Խալափյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Շարուրի փողոցի հ.20 շենքի ճակատային հատվածում փակցնելու համար միջնորդությունն են ներկայացրել նշված շենքի բնակիչները, որտեղ երկար տարիներ ապրել և ստեղծագործել է անվանի արձակագիրը:

Զորայր Խալափյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Շարուրի փողոցի հ.20 շենքի ճակատային հատվածում փակցնելու մասին բնակիչների կողմից ներկայացված միջնորդությունը տրամադրվել է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զորայր Խալափյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զորայր Խալափյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ